ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱԾ

ԼՌԵԼԸՆ խլութիւն բերէ հլութիւն,
Երբեմն համրութիւն բերէ քաղցրութիւն.

Կ'ըսէ հին առակը. ընտանեկան և ընկերական կենաց դառնութեան պատճառները շատ անգամ շատ լսելէն և շատ խօսելէն են. թէ որ մարդիկ երբեմն խուլ դառնային երբեմն համր՝ ինչ հանգիստ ինչ անուշ կ'ըլլար անոնց ընկերութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

Աձգիս Հայոց 'ի յԱստուծոյ առանձնական բարութիւնք պարգևեալ այսոքիկ. Ա. Դարձն՝ որ հրաշիւք. Բ. Սրբոյն Գրիգորի որ վասն չինութեան եկեղեցւոյ տեսիլն. Գ. Յերկոտասան առաքելոց՝ երիցն քարոզութիւն և վախճանն. Դ. Աբգարու թագաւորին նախընծայ 'ի Քրիստոս հաւատալն. Ե. Աստուածապարգև գիրն. Զ. Տապանն Նոյի որ յԱյրարատ 'ի լեառն Մասիս. Է. Եդեմաբուղխ երից գետոցն հոսումն. Ը. Զի որևէ լեանք կոչին Հայք. Թ. Յայսմ կողմանէ չարժին լուսաւորքդ 'ի յընթացս իւրեանց, որ են կարապետ մեծի լուսոյ ծագմանն. Ժ. Եւ յայսմ կողման է և աստուածատունկ դրախտն:

Եւ այս զինչ. Պարտ է առ այս զաւերուծականն աւել բան, թէ որոց շատ տուաւ՝ շատ խնդրեսցի 'ի նոցանէ:

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՊԱԼՊԻ երևելի աշխարհագիրը երկրիս հինգ մասանց ցամաք կտորին տարածութիւնը քառակուսի մղոնի վրայ առած իրենց իւրաքանչիւր բընակչօքը հանդերձ՝ հետևեալ կերպով կը դնէ

	Տարածութիւն	Բնակիչ
Եւրոպա,	2,793,000	229,200,000
Ասիա,	12,118,000	390,000,000
Աֆրիկէ,	8,500,000	60,000,000
Ամերիկա,	11,146,000	39,000,000
Ովկիանիա,	3,100,000	20,300,000
և բովանդակ գումարը	37,657,000	738,500,000

Երկրիս ցամաք կտորին 37,657,000 քառակուսի մղոն տարածութեանը վրայ աւելցուր նաև ծովերուն տարածութիւնն ալ, որ է 110,849,000 քառակուսի աշխարհագրական մղոն, բովանդակ հողագնտոյս մակերևութին տարածութիւնը 148,522,000 քառակուսի աշխարհագրական մղոն կ'ըլլայ:

ՏՕՄԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Գաղղիական տօմար. Գաղղիացիք առաջին մեծ խռովութեան ատեն իրենց տարին տասուերկու հաւասար ամիս բաժնեցին և հինգ օր ալ աւելեաց դրին, որ Սանս-քիւլոտիտ[1] կը կոչէին: Առաջին տարին 1792ին սեպտեմբերի 22ին սկսաւ, որ օրն որ աշնանային գիշերահաւասար էր. և ամիսներուն անուններն ասոնք են, ըստ չորից եղանակաց բաժնուած.

Աշնանայինք:

Այգեկութք,	Vendemiaire.
Բքաբեր,	Brumaire.
Ցրտաբեր,	Frimaire.

Ձմեռայինք:

Ձիւնալից,	Nivôse.
Անձրևալից,	Pluviôse.
Հողմաւոր,	Ventôse.

Գարնանայինք:

Բողբոջային,	Germinal.
Ծաղկաւէտ,	Floréal.
Մարգաւէտ,	Prairial.

Ամառայինք:

Ոսկեհունձ,	Messidor.
Ոսկեջերմ,	Thermidor.
Ոսկեպտուղ.	Fructidor.

Իսկ եօթնեակն ալ տասը օր բաժնեցին, որոնց անուններն են

Միաշաբաթի,	Primidi.
Երկուշաբաթի,	Duodi.
Երեքշաբաթի,	Tridi.
Չորեքշաբաթի,	Quartidi.
Հինգշաբաթի,	Quintidi.
Վեցշաբաթի,	Sextidi.
Եօթնշաբաթի,	Septidi.
Ութշաբաթի,	Octidi.
Իննշաբաթի,	Nonidi.
Տասնշաբաթի,	Décadi.

Բայց վերջէն Նափոլէոն խափանեց, և ծերակոյտը վճիռ հանեց որ 1806ին յունուարի մէկէն նորէն սկսին Գրիգորեան տումարը գործածել:

ՀԱՆԵԼՈՒԿ

Ինքն 'ի յերկուց կողմանց է ծուռ
Զկուշտըն կապած է խիստ և կուռ,
Թէ կորովի ոք է և փուռ
Ցրուէ ոսկերս մարդկան զերդ բուռ:

ՅՈՒԼԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԹՌՉՈՒՆ

[1] Sans-culottides.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ